

ԼԵզՈՒԱԲԱՆԱԿԱՆ
STUDI LINGUISTICI

ՕՏԱՐ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ
ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ
ՄԱՍՆ Ե.
ԳԵՐՄԱՆՆԵՐԷՆ

Ներկայ յօդուածով շարունակում ենք օտար յատուկ անունների տառագարձութեան կանոնները լուսաբանող յօդուածաշարքը¹, որի սոյն՝ հինգերորդ մասը, նուիրում ենք գերմաներէնից հայերէնին անցած անունների տառագարձութեանը:

Գերմաներէնը համեմատաբար «երիտասարդ» լեզու է հայ իրականութեան մէջ, եւ գերմաներէնի տառագարձութեան աւանդոյթը՝ դեռեւս յեղեղուկ: Թէեւ գերմաներէն անուններ հայերը լսել են տակաւին խաչակրաց արշաւանքների ժամանակ (գերիշխող լեզուն ֆրանսերէնն էր, բայց գերմանախօսները մեծ թիւ էին խաչակիրների մէջ), այս լեզուի նշանակութիւնը յատկապէս աճեց վերջին՝ Ի. դարում: Այնու ամենայնիւ, գերմանական անունների բուն գերմաներէն հնչումը դեռեւս ինչ-որ տեղ խորթ է հայաստանցի հայի ականջին (դրանց նա մեծ մասամբ ռուսերէն հնչումով է ծանօթ), իսկ Սփիւռքը (բացառեալ բնականա-

1 Տե՛ս ՄԻՔԱՅԷԼԵԱՆ, Ա., Օտար Յատուկ Անունների Տառադարձութեան Սկզբունքները (Մասն Ա. – մերձաւորարեւելեան լեզուներ), ի «Հայկազեան Հայագիտական Հանդէս», 40 (2020), 341-364: Նոյն, Օտար Յատուկ Անունների Տառադարձութեան Սկզբունքները (Մասն Բ. – դասական լեզուներ, հին յունարէն եւ յատիներէն), ի «Բագմավէպ», ՃՄԸ (2020), թիւ 1-2, 304-336: Նոյն, Օտար Յատուկ Անունների Տառադարձութեան Սկզբունքները (Մասն Գ. – ֆրանսերէն), ի «Հայկազեան Հայագիտական Հանդէս», 41 (2021), 443-466: Նոյն, Օտար Յատուկ Անունների Տառադարձութեան Սկզբունքները (Մասն Դ. – անգլերէն), ի «Հանդէս Ամսօրեայ», ՃԼԵ (2021), 197-246:

բար Մխիթարեան միաբանութիւնը) զրանք աւելի անգլերէնի ու ֆրանսերէնի միջնորդութեամբ է ճանաչում: Հայաստանցի հայը նոյնիսկ չգիտէ Գերմանիայի աշխարհահամբաւ վարչապետուհու ազգանունան իսկական գերմանական հնչումը՝ Merkel [ˈmɛʁk(ə)] [մէ՛րք(ը)], եւ այն տառադարձում է ռուսերէնի օրինակով՝ Մերկել (արեւմտահայերէն գրում ենք Մերֆել կամ Մերֆըլ):

Հայերէնը ժամանակին գերմաներէնից է փոխ առել իտալական Venezia քաղաքի անունը՝ վենետիկ, գերմ. Venedig (արեւմտահայերէն հնչումով, հմմտ. տաճկերէն Venedik, յունարէն Βενετία): Հնարաւոր է, որ անունը դեռեւս գերմանախօս խաչակիրներէն փոխ առած լինենք: Յատկանշական է, որ արեւելահայերէնում մի ժամանակ հնչում էր նաեւ վենեցիա ձեւը (ռուսերէնից էր): Ասել է թէ՛ հայերիս մի մասը չէր իմանում թէ ինչ է անում միւս հատուածը: Ցաւօք, դա դեռ շատ դէպքերում այդպէս է:

Ի հակառակէն՝ գերմանախօս (աւստրիական) Wien քաղաքի անունը փոխ ենք առել իտալերէնից՝ վիեննա, իտալ. Vienna (սերբերէն, խորուածերէն ու հունգարերէն Beč, Беч, Bécs Բեչ, որոնցից եւ տաճկերէն Beç, իսկ լեհերէն Wiedeń, չեխերէն Vídeň, ուկրայիներէն Відень): Հաւանական է, որ Մխիթարեան միաբանութիւնն է սրա կարապետը, որ նախ հաստատուեց վենետիկում եւ անունը բնականաբար որդեգրեց իտալական ձեւով:

Ինչպէս շարքի նախորդ յօդուածներում, այստեղ փորձելու ենք գիտական հիմքերի վրայ դնել գերմաներէնի տառադարձութիւնը եւ քննութեան ենթարկել զրա մի շարք նրբութիւններ: Մեր այս մօտեցումը բնականաբար չի ենթադրում վերջնական լուծում. այն միաժամանակ նպատակ ունի մասնագէտ հասարակութեան աչքերը բանալ խնդրի վրայ:

Յօդուածները չծանրաբեռնելու եւ միեւնոյն բանը մի քանի անգամ չկրկնելու համար՝ յօդուածների նախաբաններն ու ամփոփումները այսուհետեւ լինելու են հակիրճ: Այդու ամենայնիւ, մեր ձեռնարկութեան տեսական գաղափարներին ծանօթանալու համար, ընթերցողին հրաւիրում ենք աչքի անցկացնել նախորդ (մասնաւորապէս՝ առաջին երեք) յօդուածների նախաբանները, տեսական մասերն ու ամփոփումները:

**ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ՏԱՌԱԳԱՐՁՈՒԹԵԱՆ
ԱՇԽԱՂՀԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ**

Գերմաներէնը մի քանի երկրների, այն է՝ Գերմանիայի, Աւստրիայի, Զուիցերիայի, Լուքսմբուրգի եւ Լիխթենշթայնի² ազգային ու պետական լեզուն է՝ տեղ-տեղ այլ լեզուներին զուգահաւասար: Շուիցերիայում, բացի գերմաներէնից, ազգային-պետական լեզուներ են նաեւ ֆրանսերէնը, իտալերէնը եւ ռոմանշ լեզուն, իսկ Լուքսմբուրգում՝ ֆրանսերէնը եւ լուքսմբուրգերէնը: Գերմաներէնը պաշտօնական լեզու է նաեւ Պելզիայի եւ Իտալիայի հիւսիսային որոշ գաւառներում:

Տառադարձութեան ժամանակ պէտք է ուշադիր լինել եւ ճիշտ ընտրել տառադարձելի լեզուն: Տեղանունները կարծում ենք ճիշտ կը լինէր տառադարձել այն լեզուից, որով գլխաւորապէս խօսում է տուեալ տեղանքի բնակչութիւնը (հարցը վիճելի է), իսկ անձնանունները տառադարձել այն լեզուով, որի կրողն է տուեալ անձը (ազգային պատկանելութիւն, մայրենի լեզու): Հարցը, ինչ խօսք, միշտ յստակ չէ, եւ տառադարձողը պէտք է որոշ գիտելիքներ ունենայ անունների վերաբերեալ:

Գերմաներէն տառադարձութեան ոլորտից դուրս ենք թողնում Ստորին Նահանգներ կամ Նիդերլանդ(ներ) կոչուող երկիրն ու նրա անունները: Պատմութիւնը երկար դարեր այդ հողերը վերագրել է գերմանական աշխարհին եւ դրա լեզուն էլ համարել է գերմաներէնի բարբառներից մէկը: Սակայն անկախութեան հռչակումից ի վեր (Ժ.Ջ. դար) Ստորին Նահանգները այլեւս առանձին ազգ ու լեզու են (նիդերլանդ, հոլ(լ)անդ անուններով) եւ այսօր դրանք յստակօրէն գատում են գերմանացիներից ու գերմաներէնից:

Հոլ(լ)անդերէնը, ցաւօք, դուրս է մնում մեր յօդուածաշարքի տեսողաշտից, սակայն նրա նշանակութիւնը հայ իրականութեան մէջ այնպիսին է, որ արժանի է առանձին վերաբերմունքի (այլ ոչ թէ այլ լեզուների տառադարձութեան տակ անցնելու ճակատագրին):

2 Այս անուանումների տառադարձութեան համար տե՛ս ստորեւ եւ ինչպէս նաեւ ողջ յօդուածը:

SCHWEIZ / SCHWYZ ԱՐՄԱՏԸ

ԵՒ ԴՐԱՆԻՑ ԱԾԱՆՑՈՒԱԾ ԲԱՌԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՈՒՄԸ

Կամենում ենք պարզութիւն մտցնել գերմանալեզու երկրներին մէկի՝ Schweiz անուանման եւ այդ արմատից կազմած հայերէն բառերի ձեւերի վերաբերեալ:

Տեղական գերմանական բարբառով՝ ձեւը Schwyz է, գրական գերմաներէն՝ Schweiz, ֆրանսերէն՝ Suisse, իտալերէն՝ Svizzera: Արեւմտահայերէնը որդեգրել է իտալական ձեւը՝ Չուիցերիա («իա» վերջաւորութեամբ): Արեւելահայերէնը վերցրել է ռուսերէնի ձեւը՝ Швейцария, որ գերմաներէն Schweizer (բնակչի անուանումը) ձեւից (լեհերէն szwajcar ձեւի միջնորդութեամբ) տուել է ռուսերէն швейцар, որից էլ սովետահայերէն³ Շվեյցար խառնածին ձեւը («ei» > «էյ», փոխանակ՝ «այ», «er» > «ար», փոխանակ՝ «եր»):

Միաւորելով արեւմտահայերէն ու արեւելահայերէն ձեւերը եւ դրանք համադրելով բնօրինակին, որպէս միացեալ հայերէն ձեւեր մենք առաջարկում ենք որդեգրել «Շուիցերիա, շուիցերացի, շուիցերական» ձեւերը: «Շուիցեր» արմատը յարգում է նաեւ տեղական Schwyzer ձեւը, որի վրայ եւ դնում ենք «-իա» երկրանունականերտ վերջաւորութիւնը:

Արեւմտահայերէնը եւ արեւելահայերէնը մերձեցնելու եւ միացեալ հայերէն ձեւերը ճշտելու մտահոգութեամբ, խորհուրդ ենք տալիս նկատի առնել նշած հանգամանքը ոչ միայն այս տեղանուն, այլեւ աշխարհագրական ուրիշ նոր անուններ որդեգրելու դէպքերում:

ԳԵՐՄԱՆԵՐԷՆԻ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ

Գերմաներէնն ունի բազմաթիւ բարբառներ, որ բաժանում են երեք խմբի. ա) վերին՝ Ober, բ) միջին՝ Mittel (այս երկուսը միաւորում են որպէս հարաւային՝ լեռնային վերնախումբ, այլ

3 «Սովետահայերէն» ասելով նկատի ունենմ 1920-30ական թուականներից Հայաստանում հաստատուած արեւելահայերէնը, որ մինչեւ 1990ական թուականները ռուսերէնի անմիջական, իսկ այժմ՝ աւանդական ազդեցութեան տակ է եղել եւ է: Խօսքը ոչ միայն (եւ այնքան) ուղղագրութեան, որքան բառապաշարի ու շարահիւսական օտարաբանութիւններով յագեցած շինածոյ լեզուի մասին է:

կերպ կոչուած՝ բարձր, նաեւ՝ վերին, Hoch) եւ գ.) հիւսիսային՝ դաշտավայրային խումբը (ստորին, ներքին, Nieder, Platt): Վերին, բարձր, ստորին, ներքին ածականները բացառապէս աշխարհագրական անուանումներ են: Միջին (Mittel) ածականը կարող է եւ պատմական նշանակութիւն ունենալ՝ հին եւ նոր լեզուների միջին ժամանակահատուածի տարատեսակը:

Գերմաներէն գրական լեզուն գոյացել է վերին եւ միջին բարբառախմբերի հիման վրայ եւ այսօր պետական ու գրաւոր լեզու է վերը նշած գերմանախօս երկրներում: Գրական այդ լեզուն տարբեր կերպ են անուանում՝ Hochdeutsch, Standarddeutsch, Standardhochdeutsch, die deutsche Standardsprache, Schriftdeutsch, die deutsche Schriftsprache: Խօսքը բոլոր դէպքերում այսօրուայ գրական գերմաներէնի մասին է: Այդ եւ միայն այդ լեզուն է լինելու մեր տառադարձութեան աղբիւրը:

Հայերէն հանդիպում ենք «վերին գերմաներէն» կամ «բարձր գերմաներէն» դարձուածքների: Գերմաներէնը ինքն էլ երկու եզրոյթ ունի (Hoch / Ober), եւ այլ լեզուներ նոյնպէս երկու եզրոյթ են կիրարկում: Խօսքը կարող է վերաբերել ե՛ւ գրական լեզուին, ե՛ւ վերին (բարձր, լեռնային) բարբառներին, մի բան որ կարող է երբեմն թիւրիմացութիւն առաջացնել:

Մենք հայերէն տառադարձումները կատարում ենք սկրզբունքօրէն բացառապէս գրական գերմաներէնից: Գրական գերմաներէնը Աւստրիայում եւ Շուիցերիայում ունի իր մասնակի առանձնայատկութիւնները, որոնք սակայն աննշան են մեր տառադարձութեան համար, եւ մենք այս յօդուածում դրանց չենք անդրադառնալու:

Մեր տառադարձութեան տեսադաշտից դուրս է նաեւ Niederdeutsch կամ Plattdeutsch կոչուած գրական լեզուն (ստորին կամ ներքին գրական գերմաներէնը): Սա Գերմանիայի հիւսիսային հարթավայրերի բարբառների խմբի վրայ հիմնուած եւ նմանապէս հարուստ պատմութիւն ունեցող գրաւոր լեզու է: Հասկանալի է սակայն, որ հայերէնի տառադարձութիւնը չի կարող միաժամանակ աղբիւր ունենալ ե՛ւ վերին գերմաներէնը (որ ողջ Գերմանիայի պետական լեզուն է), ե՛ւ ստորին գերմաներէնը, այլապէս խառնաշփոթից չենք կարող խուսափել: Ինչպէս հիմնաւորել ենք յօդուածաշարքի Ա. մասում, մեր լեզուաբանութիւնը պէտք է յստակեցնի, թէ աշխարհի որ լեզուներն են տառադարձութեան ենթակայ եւ որոնք են երկրորդական: Գերմանիայի

պարագայում, մեր տառադարձութիւնը, ցաւօք, պէտք է զոհարել-
րի ստորին գերմաներէնը: Սակայն դա չի խանգարում, որ տա-
ռադարձողը երբեմն անդրադառնայ ստորին գերմաներէնի ստու-
գաբանութեանը:

ՀԱՅԵՐԷՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՀՆՁԻՒՆԱԿԱՆ ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐԸ

Ինչպէս արդէն քանիցս խօսել ենք, հայերէնի հնչիւնաբա-
նութիւնն ու ուղղագրութիւնը ունեն սկզբունքներ, որոնք անհ-
րաժեշտ է յարգել իւրաքանչիւր լեզուից կատարելիք տառադար-
ձութեան ժամանակ:

Յիշեցման համար՝ ստորեւ ամփոփ ներկայացնում ենք հա-
յերէն տառադարձութեան՝ առաջին երեք յօդուածներում արծար-
ծած սկզբունքները: Յօդուածները չծանրաբեռնելու համար ման-
րամասները չենք կրկնում, եւ ընթերցողին հրաւիրում ենք,
նախքան որեւէ լեզուի տառադարձութեանն անդրադառնալը,
անպայման ծանօթանալ այդ սկզբունքներին:

ա) Պայթական («բ-պ-փ», «գ-կ-փ», «դ-տ-թ») եւ պայթաչփա-
կան («ջ-ճ-չ», «ձ-ծ-ց») բաղաձայնների եռաստիճան կարգը հայե-
րէն դասական տառադարձութեան ողնասիւններից մէկն է:

բ) Տառադարձութիւններում «է»ն գրում ենք միայն բառա-
վերջին, կամ այլուր ձայնաւորից առաջ: «Յ»ը հայերէնի [e]
հնչոյթն է եւ այն գրում ենք մնացած դիրքերում՝ բառամիջում
թէ բառասկզբին (բաղաձայններից առաջ): Բառասկզբի «ե»ը
պարտադիր չէ [jե] արտասանել. օտար անունների մեծ մասում
այն գերադասելի է իր մաքուր հնչումով՝ [e] արտասանել:

գ) Օտար [o] հնչիւնը տառադարձութիւնների մէջ ամէնուր
արտայայտում ենք մեսրոպեան «ո» տառով: Բառասկզբին, ինչ-
պէս եւ «ե»ի պարագայում, պարտադիր չէ «ո»ն [վո] ընթերցել:
Կիլիկեան ժամանակներից մուտք գործած կլոր «օ» տառը տա-
ռադարձութեան համար չէ:

դ) Բառամիջում եւ բառավերջին խոլոսափում ենք «ը» գը-
րելուց:

ե) Օտար [v] (նաեւ [w]) հնչիւնը հայերէն արտայայտում
ենք «վ, ւ, ու» տառերից մէկով, ըստ հայոց դասական ուղղա-
գրութեան կանոնների: Բառասկզբում գրում ենք միմիայն «վ»:
Ըստ հնարաւորութեան՝ օգտագործում ենք հայերէնի «աւ, եւ,
իւ» երկբարբառները: Բառամիջում՝ բաղաձայնից յետոյ եւ ձայ-

նաև որից առաջ, գերադասում ենք գրել (այնտեղ ուր դա թոյլ է տալիս ստուգաբանութիւնը) «ու»:

զ) Օտար «ia (ja), ie (je), ii (ji), io (jo), iu (ju)» համակցութիւնները արտայայտում ենք բառակցքին «յա, յե, յի, յո, յու» կապակցութիւններով, բառամիջում՝ «իա, իե, ի (կրկնակ «իի»-ն պարզում է), իո, իու» (եւ ոչ թէ մեր երկբարբառներով):

է) Բառակցքի «յ» տառի արտասանութիւնը անհրաժեշտաբար [h] չէ: Աւանդական անուններում այն [h] է հնչում, սակայն նոր տառադարձութիւնների մէջ այն պէտք է իր ձայնով՝ [j] արտասանենք:

ը) Հայերէնի երկբարբառներն ու եռարբառներն են. «այ, ոյ, աւ (օ), եւ, իւ, եա, լո, եայ, եաւ (եօ), լոյ»: Որեւէ տառադարձութեան ժամանակ կարեւոր է յարգել սրանց գրութեան կանոնները եւ չյօրինել նոր կապակցութիւններ:

թ) Նոր լեզուների տառադարձութիւնների մէջ օտար [r] հնչիւնը ամենուր գրում ենք «ր», բացառութեամբ բառակցքի, ուր գրում ենք «ռ»: «Ռ»ի գրութիւնը «Ա»ից եւ «լ»ից առաջ պարտադիր չէ:

Հիմնարար այս սկզբունքների մասին աւելի մանրամասն տե՛ս մեր առաջին երեք յօդուածների համանուն բաժիններում (Հայերէն տառադարձութեան հնչիւնա(բան)ական սկզբունքները):

Ինչպէս արդէն քննել ենք նախորդ յօդուածներում, այսօր փաստօրէն ունենք տառադարձութեան երեք սկզբունք՝ մեսրոպեան կամ հայկաբան, կիլիկեան (կամ երբեմն՝ արեւմտահայ, սփիւռքահայ) եւ սովետահայ (կամ հայաստանեան) սկզբունքները:

Մենք, ինչպէս քանիցս ասել ենք, դէմ ենք ե՛ւ սովետահայերէն, ե՛ւ կիլիկեան տառադարձութիւններին: Նրանք մի կողմից՝ օտար լեզուների ազդեցութեան, միւս կողմից՝ մեսրոպեան կանոնները զանց առնելու հետեւանք են: Աւելորդ չենք համարում կրկնել, որ օտար լեզուներին յարմարուելու փորձերը կերպարանափոխում են հայերէնը եւ ոտնակոխ են անում մայրենին ամրապնդելու ու միասնական լեզու շինելու ջանքերը:

ԳԵՐՄԱՆԵՐԷՆԻ ՀՆՁՈՅԹՆԵՐՆ ՈՒ ՀՆՁԻՒՆՆԵՐԸ

Գերմաներէնի պարագայում, ուր բառերի գրութիւնը բաւական լաւ է յարմարեցրած բանաւոր հնչողութեանը (ի տարբերութիւն, օրինակ՝ անգլերէնի ու ֆրանսերէնի), տառադարձելիս

աւելի տրամաբանական է իբրեւ ելակէտ ընդունել գրութիւնը, այն բնականաբար հնարաւորինս ճշտելով հնչողութեամբ ու ստուգաբանութեամբ:

Այդու հանդերձ, ստորեւ՝ մասնագէտներին իբրեւ յիշեցում, այլոց՝ ի գիտութիւն, բերում ենք Հնչիւնաբանութեան Միջազգային Ընկերութեան (IPA⁴) այբուբենի նշանագրերը, որոնք աւանդաբար կիրարկում են գերմաներէնի հնչոյթները արտայայտելու համար: Հնչոյթի կամ հնչիւնի⁵ նշանը ընդունուած է դնել անկիւնաւոր փակագծերի մէջ (իսկ տառ արտայայտելու համար նշանագիրը դնում ենք չափերտների մէջ. «ա», «բ», «գ» եւ այլն): Ստորեւ՝ օրինակների մէջ, թաւ ընդգծել ենք տուեալ հնչոյթը արտայայտող տառերը:

Բաղաձայններ (23). [b] Bank, [p] Probe, [pf] Pferd, [d] Dieb, [t] Tisch, [g] Glück, [k] Kohle, Krieg, gesagt, [v] Wacht, [f] Funk, Vater, [z] Rose, [s] Kissen, Fluß, [ç] ich, König, richtig, [x] nach, [h] Hut, [ts] Zimmer, [tʃ] deutsch, [ʃ] Schwester, Sprache, Straße, [ʒ] Genie, Jackett, [l] legen, [m] Meer, [n] Nase, [ŋ] ringen, Onkel, [r] Ritter, *նաեւ բաղադրեալ՝* [ks] wachsen, [kv] Qual:

Կիսաձայն (1). [j] Jahr:

Կարճ ձայնաւորներ (10). [a] Album, [ɛ] Teller, [e] Element, [ɐ] genug, [i] immer, [o] Tomate, [ɔ] offen, [ø] öffnen, [u] Umlauf, [y] rütteln:

Երկայն ձայնաւորներ (8). [ɑ:] Ahnung, [ɛ:] Rätsel, [e:] Rede, [i:] ihnen, [o:] Obst, [ø:] Öse, [u:] Uhr, [y:] Übung:

Երկբարբառներ (3). [ai] Waise, Feind, [au] Auge, [ɔy] Täufing, Feuer:

Յօդուածիս տառադարձման ելակէտը լինելու են, ուրեմն, տառերը:

4 International Phonetic Association, Հնչիւնաբանութեան Միջազգային Ընկերութիւն, որի հնչական «այբուբենով» է ընդունուած գրի առնել զանազան լեզուների հնչոյթները: Գերմաներէն գուգահեռաբար ասում են Weltlautschriftverein, սակայն միջազգայնօրէն ընդունուած է կա'մ ֆրանսերէն (API), կա'մ անգլերէն (IPA) յայտաւումը:

5 «Հնչոյթ» եւ «հնչիւն» եզրոյթների տարբերութիւնը քաջ յայտնի է լեզուաբաններին: Տե՛ս ՊԵՏՐՈՍԵԱՆ, Հ. Զ. - ԳԱԼԱՏԵԱՆ, Ս. Ա. - ՂԱՐԱ-ԳԻԻԼԵԱՆ, Թ. Ա., *Լեզուաբանական քառաբան*, Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայ, Երեւան 1975:

**ԳԵՐՄԱՆԵՐԷՆԻՑ ՏԱՌԱԴԱՐՁԵԼՈՒ
ԿԱՆՈՆՆԵՐ ԵՒ ՆՐՔՈՒԹԻՒՆՆԵՐ**

**Գերմաներէնն ունի 42 պարզ հնչոյթ (երկբարբառները չը-
հաշուած)՝ 10 կարճ ձայնաւոր, 8 երկայն ձայնաւոր, 1 կիսաձայն,
23 բաղաձայն: Հայերէնն ունի 36 պարզ հնչոյթ՝ 6 ձայնաւոր, 1
կիսաձայն, 29 բաղաձայն: Հայերէնը չի տարբերում կարճ ու եր-
կայն ձայնաւորներ:**

**Ստորեւ անդրադառնում ենք գերմաներէն տառադարձու-
թեան գլխաւոր կանոններին ու նրբութիւններին:**

**ա) Բաղաձայնների մի գգալի մասի տառադարձումն ընդ-
հանրապէս դժուարութիւններ չի յարուցում. «b», «d», «g», «w» [v],
«f» կամ «v» [f], «ss» կամ «ß» [s], «sch» [ʃ], «tsch» [tʃ], «z» [ts], «l», «m»,
«n», «h» տառերն ու տառակապակցութիւնները (ամէն մէկը մի
հնչոյթ է ներկայացնում) համապատասխանաբար լինում են. «p»,
«t», «q», «վ/ւ/ու», «փ», «ս», «շ», «չ», «ց», «լ», «մ», «ն», «հ»: Օ-
րինակներ. Bregenz Բրեգենց, Bochum Բոխում, Düring Դիւրինգ,
Dortmund Դորթմունդ, Gera Գերա, Graz Գրաց, Grimm Գրիմ, Wolf
Վոլֆ, Wilhelm Վիլհելմ, Freiburg Ֆրայբուրգ, Fleming Ֆլեմինգ, Fri-
edrich Ֆրիդրիխ, Velbert Վելբերթ, Vechta Վեխթա, Boss Բոս, Lessing
Լեսինգ, Schwerin Շուերին, Busch Բուշ, Lubitsch Լուբիշ, Fritsch Ֆ-
րիշ, Mainz Մայնց, Zürich Յիւրիխ, Leibniz Լայբնից, Luzern Լուցերն,
Linz Լինց, Mannheim Մանհայմ, Mach Մախ, Nürnberg Նիւրնբերգ,
Haydn Հայդն, Hamburg Համբուրգ, Herzl Հերցլ:**

**Հայերէնում [վ] հնչիւնը գրաւոր երեք արտայայտութիւն
ունի (տե՛ս վերը). Wolfgang Վոլֆգանգ, Warburg Վարբուրգ, Le-
wald Լեւալդ, Kiwus Գիւուս, Ludwig Լուդուիգ, Schwarz Շուարց:**

**Յիշեցնում ենք, որ եւրոպական զանազան լեզուների, այդ
թւում գերմաներէնի, [ֆ] հնչիւնը հայերէն տառադարձում ենք
մեր «կիլիկեան» «ֆ» տառով, քանզի դա է լատիներէն «F» տա-
ռի համարժէքը, ինչպէս նաեւ գծագիր դուստրը: Օրինակները
տե՛ս վերը:**

**բ) Գերմաներէնը տարբերում է կարճ եւ երկայն ձայնաւոր-
ներ, որոնք սակայն տառադարձութեան մէջ բնականաբար զանց
ենք առնում՝ հայերէնը կարճ ու երկայն չտարբերելու պատճա-
ռով: Լինեն կարճ թէ երկայն, «a», «e» (նաեւ «ä⁶»), «i» (նաեւ**

6 Գրում է նաեւ «ae» երկնիշ ձևով, հնում տարածուած, այսօր մասնա-
ւորապէս Շուիցերիայում:

«ie», որ միշտ երկայն է), «o», «u» տառադարձում ենք համապատասխանաբար: «a», «ե/է» (ըստ հայերենի ուղղագրական կանոնների), «ի», «ո» (բոլոր դիրքերում), «ու»: Օրինակներ. Achim Ա-խիմ, Albrecht Ալբրեխտ, Baar Բար, Haar Հար, Eschborn Եշբորն, Erfurt Երֆուրտ, Fellbach Ֆելբախ, Herzl Հերցլ, Härtling Հերթլինգ, Thälmann Թեյման, Aesch Եշ, Haeckel Հեֆլ, Isar Իզար, Linz Լինց, Chemnitz Քեմնից, Kiel Քիլ, Liestal Լիստալ, Osnabrück Ոսնաբրիւֆ, Bonn Բոն(ն), Adolf Ադոլֆ, Ulrich Ուլրիխ, Wolfsburg Վոլֆսբուրգ, Salzburg Զալցբուրգ:

դ) «Ch» երկտառը արտայայտում է երկու հնչոյթ. [x] (կոշտ [խ]՝ ach ախ) եւ [ç] (փափուկ [խ]՝ համարեա [h] կամ փափուկ [շ]՝ ich իխ / իհ / իշ): Դրանց հնչումը բառական տարբեր է բարբառներում, օրինակ՝ Շուիցերիայում չունեն [ç]: Հայերենը երկու հնչիւններն էլ տառադարձում է «խ»: Օրինակներ. կոշտ [խ]՝ Bach Բախ, Bloch Բլոխ, Koch Քոխ, Wallach Վալախ, փափուկ [խ]՝ Albrecht Ալբրեխտ, Friedrich Ֆրիդրիխ, Heinrich Հայնրիխ, München Մյունխ(ե)ն:

դ) Գերմաներենի ուղղագրութիւնը երկայն ձայնաւոր նշանակելու համար ըստ դիրքի կիրարկում է «Hh» տառը (ձայնաւորից յետոյ): Այդ «Hh»-ն համը է, եւ տառադարձելիս այն սկզբունքօրէն չենք գրում. Brahms Բրամս, Lahn Լան, Dahn Դան, Fahrenheit Ֆարնհայթ, Mahler Մալր, Kehlmann Քեյման, Mehring Մերինգ, Diehl Դիլ, Behring Բերինգ, Rihm Ռիմ, Ohm Ում, Lohmar Լոմար, Wohmann Վոման, Stuhr Շթուր, Uhland Ուլանդ, Ruhr Ռուր: Սխալ է հետեւաբար «Ohm»-ի «ohմ» գրութիւնը:

Այդ տառը հայերէն կարելի է գրել միայն հայերենի ուղղագրութեան պահանջած դէպքերում, երբ հայերէնում «h»-ի պակասը կ'աղաւաղի ուղղագրական տեսքը (տե՛ս ստորեւ՝ համը «ը»-ի վերաբերեալ, կէտ Ժե.): Օրինակ. Hohenzollern Հոհենցոլ(ե)րն, Lohenstein Լոհենշթայն, van der Rohe Ռոե(հ), Riehen Ռիհեն, Rahel Ռաիլ:

ե) Գերմաներենի «ü» տառը եւ հնչիւնը (երբեմն գրում է նաեւ «ue», իսկ յունարէնից փոխառեալ արմատներում՝ «y») հայերէն տառադարձում ենք կա՛մ «իւ», կա՛մ «ու»: «Իւ»-ն ընդհանուր տառադարձումն է, այն սկզբունքօրէն ընդունելի է տառի դիրքերի մեծ մասի համար: Սակայն, ինչպէս արդէն խօսել ենք նախորդ յօդուածներում⁷, մշտապէս կոշտ հնչում ունեցող բաղա-

7 Տե՛ս յօդուածաշարի Գ. մասը (Ֆրանսերէն):

ձայններից յետոյ («դ», «խ», «ռ») «իւ» գրելը ցանկալի չէ, քանի որ այդ դէպքում հայերէն հնչումը լինում է [յու], այլ ոչ թէ փափուկ [ու]: «իւ» գրելը յարմար չէ նաեւ բառակցքին, որ նոյնպէս կը տայ [յու] արտասանութիւն: Ուստի պէտք է հաշուի առնել այդ հանգամանքը եւ նշած դիրքերում «յ» տառը տառադարձել «ու»:

Օրինակներ. «իւ»ի տառադարձած՝ Thüringen Թիւրինգն, Büdingen Բիւդինգն, Fürth Ֆիւրթ, Fürstfeldbruck Ֆիւրսֆելդբրուք, Günzburg Գիւնցբուրգ, Hürth Հիւրթ, Lübeck Լիւբեք, Mühlheim Միւլհայմ, Züllich Յիւլիխ, Hürlimann Հիւրլիման, Klüger Քլիւգը, Süskind Ջիւսկինդ, Brüning Բրիւնցնգ, von Bülow Բիւլոն(վ), «ու»ի տառադարձած՝ Rühmkorf Ռումֆորֆ, Jürgen Յուրգն, Rütli Ռուլի, Rühmann Ռուման, Rückert Ռուքերթ, Übach-Palenberg Ուբախ-Փալնբերգ:

Յունական ծագման բառերի «յ» տառը, եթէ այն յարմար չէ «իւ» տառադարձել, պէտք է փոխարինել «ի»ով (եւ ոչ «ու»ով). Physik Ֆիւզիկ կամ Ֆիզիկ, Dynamit դիւնամիտ կամ դիմամիտ, Gymnasium գիւմնազիում կամ գիմնազիում:

զ) «Ö» տառի եւ հնչիւնի մասին (երբեմն գրւում է նաեւ «oe») մենք արդէն խօսել ենք յօդուածաշարքի Ա. եւ Գ. մասերում՝ թուրքերէնի ապա եւ ֆրանսերէնի կապակցութեամբ: Կիլիկեան ուղղագրութիւնը որդեգրել է հայերէնում գոյութիւն չունեցած «էօ» տառակապակցութիւնը, իսկ սովետական ուղղագրութիւնը այն վերածել է «յո»ի: Երկուսն էլ խոտելի ենք համարում: Եթէ մեր լեզուն չունի այդ հնչիւնը, այն պէտք է փոխարինել մի այլ հնչիւնով: Մենք առաջարկել եւ այժմ էլ առաջարկում ենք մեր պարզ «ո» հնչիւնը: Օրինակներ. Böblingen Բոքլինգն, Flörsheim Ֆլորսհայմ, Görlitz Գորլից, Göttingen Գոթինգն, Mönchengladbach Մոնխցլադախ, Öhringen Օրինգն, Wörgl Վորգլ, Böll Բոլ, Löwith Լուվիթ, Dönitz Դոնից, Köpke Քոփք, Schröder Շրոդըր, König Քոնիգ, Löw (Loew) Լուվ:

Արեւմտահայերէնը «Köln»ը գրում է (կիլիկեան տառադարձութեամբ)՝ Բէլզն, արեւելահայերէնը (սովետական տառադարձութեամբ)՝ Քյոլն: Այս քաղաքի անունը, «f» տառի փափկութեամբ, արդէն արմատացած է հայերէնի երկու ճիւղերում, եւ մենք կ'առաջարկէինք այն միայն ուղղագրել՝ Քիոլն, համաձայն հայերէնի տառադարձական ուղղագրութեան (բառամիջում՝ բաղաձայնից յետոյ գրւում ենք ոչ թէ «յ», այլ՝ «ի»): Թերեւս լաւագոյնը կը լինէր պահել անուան լատինական ձեւը՝ Կոլոնիա (հմտ. իտալ.

Colonia, *Ֆրանս. եւ անգլ.* Cologne, *յուն.* Κολωνία, *նոյնիսկ լեհերէն* Kolonia):

Ճիշտ տառադարձութեան դէպքում՝ «Goethe»-ի մէջ *նոյն-պէս*, «oe»-ն պէտք է լինէր «n»: Տե՛ս նաեւ ստորեւ՝ կէտ ծե.:

է) Գերմաներէնի երկրարբառներից առաջինը՝ [ai]ը, *կարող է ունենալ չորս գրութիւն՝* «ai, ay, ei, ey»: *Բոլորը տառադարձում ենք* «այ». Main Մայն, Waiblingen Վայբլինգն, Bayreuth Բայրոյթ, Maybach Մայրախ, Einbeck Այնբեք, Eisenstadt Այզնշթատ, Kreis Քրայս, Bernstein Բերնշթայն, Heym Հայմ, Weyl Վայլ, Diltney Դիլթայ:

Սովետահայերէնը երկար տարիներ, ռուսերէնի անսացողութեամբ, «ei/ey» երկրարբառի տառադարձութիւնը դրել էր «էյ» (բառասկզբին՝ «էյ»): Էյնշտէյն, Շվէյցարիա, Էյլաու, Լէյպցիգ եւ այլն: Այսօր հայերէնը բարեբախտաբար ազատոււմ է մեսրոպաչունէ ուղղագրութեանը անյարիր այդ ձեւերից:

ը) Մենք արդէն երկար խօսել ենք [au] *երկրարբառի տառադարձութեան մասին (նախ՝ արարերէնի, ապա եւ անգլերէնի կապակցութեամբ) եւ այստեղ չենք կրկնում նոյն մտքերը: Ստուգաբանօրէն այս երկրարբառը համապատասխան է հայերէն «աւ»ին: Մենք հաւանութիւն չենք տալիս լայնօրէն տարածուած «աու» երկձայնաւոր տառադարձութեանը:*

Գերմաներէնի տարբեր բարբառներ սրա համար տարբեր արտասանութիւններ ունեն, սակայն բոլորն էլ համաձայն են, որ հնչիւններից առաջինը ձայնաւոր է, երկրորդը՝ կիսաձայն: Գերմաներէնը չունի «aw» գրաւոր համակցութիւն, այլ միայն «au» է, մի բան որ նմանապէս խօսում է գերմաներէն «au»-ի եւ հայերէն «աւ»-ի համագործակցութեան օգտին: «Աւ»-ի օգտին են վկայում նաեւ արաբերէնի, հին յունարէնի եւ լատիներէնի վաղուց արդէն աւանդական դարձած «աւ» տառադարձութեան օրինակները⁸:

Մենք, հետեւաբար, առաջարկում ենք, ինչպէս առաջարկել ենք անգլերէնի համար, նոյն մօտեցումը ցուցաբերել եւ գերմաներէնի նկատմամբ: Օրինակներ. Aurich Աւրիխ, Dachau Դախաւ, Passau Փասաւ, Strausberg Շթրաւսբերգ, Zwickau Ցուիքաւ, Thurgau Թուրգաւ (ի դէպ՝ Gau նշանակում է «գաւառ»), Ausländer Աւ-լենդըր, Strauss Շթրաւս, Augsburg Աւգսբուրգ, Brauns Բրաւնս, Kraus Քրաւս, Beckenbauer Բեքնբաւր: Ինքը՝ գերմաներէնը, յունալատի-

8 Տե՛ս յօդուածաշարքի Մասն Ա. – մերձաւորարեւելեան լեզուներ եւ Մասն Բ. – հին յունարէն եւ լատիներէն մասերը:

նական «au»-երը նոյն [au] երկբարբառով է տառադարձում ու արտասանում. August Աւգուստ, Austria Աւստրիա, Claudius Կլավդիոս, Augias Աւգիաս, Paul Պաւղոս եւ այլն:

Ընդունում եւ հասկանում ենք, որ միշտ չէ, որ հայ հասարակութիւնը դիւրաւ կը հաշտուի այս ձեւերի հետ: Հարցը, ինչպէս արդէն նշել ենք, կարօտ է մասնագիտական քննութեան:

Թ Գերմաներէնի [ɔy] երկբարբառը (գրութեան մէջ «eu» կամ «äu») տառադարձում ենք «ոյ», ինչպիսի դիրքում էլ այն յայտնուի եւ ինչ վերջնական արտասանութիւն ունենայ: Հայերէն հնարաւոր է կարգաւ ե'ւ [ոյ], ե'ւ [ույ]: Գերմաներէնը այս կարգի միայն մէկ երկբարբառ ունի եւ շփոթութեան նոյնիսկ առիթ չի կարող լինել: Օրինակներ. Feuerbach ֆայրբախ, Steuben Շթայբն, Neuenburg Նայնբուրգ, Bayreuth Բայրոյթ, Kreuznach Քրոյցնախ, Waghäusel Վագհայզլ, Käutner Գայթնր:

Հին յունարէնից փոխ առած բառերում գերմաներէնը յունարէն «eu» երկբարբառը փոխարինում է «eu»-ով: Հայերէն գերադասելի ենք համարում դրանք գրել «եւ»⁹. Eugen Roth Եւգեն Ռոթ (քան թէ՛ Ոյգն Ռոթ):

Neu ածականը գերադասում ենք թարգմանել՝ «նոր», քան թէ գրել «նոյ». Neu Wulmstorf Նոր Վուլմսթորֆ: Սակայն ոչ բարդութիւնների մէջ. Neustadt Նայշթադ, Neumann Նայման:

Երբեմն «äu»-ը երկբարբառ չէ. Matthäus Մաթէուս (եթէ սովորական անձնանուն է, այսինքն՝ աստուածաշնչեան անուն չէ, տե՛ս ստորեւ, կէտ իր.):

Ժ Գերմաներէնը ունի հագուագիւտ «ui» գրութիւն, որ երկբարբառ չէ. Duisburg Դիւսբուրգ («i»-ն «u»-ն երկայնացնելու համար է, հնչում է [ˈdyːsbʊrk]):

Ժա Բաղաձայներից խուլ պայթականները՝ [p, t, k], այսօր տառադարձում են հայերէն շնչեղ կամ պարզ խուլերով՝ «փ/պ, ք/տ, ֆ/կ»: Երկաստիճան արեւմտահայերէնը դրանք մշտապէս շնչեղներով է տառադարձել («փ, ք, ֆ»), քանզի ինքն էլ չունի պարզ խուլեր: Արեւելահայերէնը առաջներում (ռուսերէնի ազդեցութեան տակ) պարտադրում էր պարզ խուլերով («պ, տ, կ») ¹⁰,

9 Տե՛ս յօդուածաշարֆի Մասն Բ. – հիմ յունարէն եւ լատինարէն մասը:

10 «Տերմինաբանական կոմիտէն» այդպիսի մի որոշում էր կայացրել 1939ին անգլերէնի վերաբերեալ, որ նմանապէս կարելի է վերագրել

սակայն այժմ դրանք աւելի ու աւելի շնչեղներով են տառադարձուած (ինչպէս որ հայի ականջը դրանք լսում է գերմաներէն անուններում):

Ինչպէս արդէն խօսել ենք անգլերէնի պարագայում, սա նուրբ հարց է եւ մասնագիտական քննարկման առարկայ: Գերմաներէնը, իբրեւ գերմանական խմբի լեզու, պայթականները մեծ մասամբ արտասանում է շնչեղ, եւ միայն հազուադէպ՝ պարզ: Սակայն ինքը միշտ չէ, որ գիտակցում է դրանց տարբերութիւնը. գերմանախօսի համար շնչեղ ու պարզ խուլերը միեւնոյն հնչոյթն են: Օրինակ՝ [sp, st, sk, ʃp, ʃt, ʃk] հնչիւնակապակցութիւնների մէջ կարող են լսուել նմանապէս պարզ խուլեր՝ [սպ, ստ, սկ, շպ, շտ, շկ]: Աւելին՝ Գերմանիայի հարաւում, Աւստրիայում եւ Շուեյցերիայում բառասկզբի պայթականները շունչը կորցնում են կամ թոյլ են արտասանում:

Ինչպէս անգլերէնի պարագայում, մենք հետեւեալ մօտեցումն ենք որդեգրում: Գերմաներէն (կամ գերմանական խմբի այլ լեզուներից եկող, նաեւ՝ անյայտ) արմատներով անունները տառադարձելու ենք շնչեղ խուլերով՝ «փ, ք, ֆ»: Օրինակներ. Paderborn Փադըբորն, Papenburg Փափնբուրգ, Potsdam Փոթսդամ, Trier Թրիր, Ternitz Թերնից, Gutenberg Գուտենբերգ, Klagenfurt Քլագֆուրտ, Kiel Կիլ, Kant Կանթ:

Զուգահեռաբար՝ ռոմանական լեզուներից (ֆրանսերէն, իտալերէն...), ինչպէս նաեւ հին յունարէնից ու լատիներէնից սերած անունները պարզ խուլերով ենք տառադարձելու (սրանց համար տե՛ս ստորեւ):

Այնուամենայնիւ, մեր այս մօտեցումը վերջնական չէ, եւ հարցը անհրաժեշտաբար պէտք է դնել մասնագիտական քննութեան:

Ժբ) «Sp» եւ «st» տառակապակցութիւնների մէջ (բառասկզբին) գերմաներէնը «s» տառը հնչեցնում է [շ]: Հայերէնը հենց այդպէս էլ աւանդաբար տառադարձում է: Խնդիրը, որպէս նախորդ կէտի հետեւանք, «p» եւ «t» տառերն են. գրենք «շփ» թէ՞ «շպ», «շք» թէ՞ «շտ»: Մենք, միօրինակութիւն պահպանելու նպատակով, գրելու ենք «շփ» եւ «շք»: Օրինակներ. Spremberg

գերմաներէնի: Տե՛ս Տերմինաբանական եւ ուղղագրական տեղեկատու (1956-2006), խմբ. ԲԱՐՍԵՂԵԱՆ, Հ. Խ., 9-րդ հրաշալիք, Երևան 2006, 178:

Շփրեմբերգ, Spittal Շփիթալ, Spiez Շփից, Stuttgart Շթուքաք, Steinitz Շթայնից, Strausberg Շթրաւսբերգ, Einstein Այնշթայն, նմանապէս՝ Stein շթայն, Stadt շթադ վերջաւորութիւններով բոլոր անունները:

Սակայն հարցը կախուած է նախորդ կէտի լուծումից, եւ գերմանագէտները պէտք է իրենց վճռորոշ խօսքը ասեն:

Ժգ.) Գերմաներէնում բառավերջին ձայնեղ բաղաձայնները խլանում են (այդ երեւոյթը նկատելի է շատ լեզուներում)՝ օրինակ՝ [b, d, g] հնչիւնները (սրանք ամենայաճախ հանդիպողներն են) արտասանւում են համապատասխանաբար [p, t, k]: Ձայնեղները վերածւում են պարզ խուլերի (ոչ թէ չնչեղների): Տառադարձութեան ժամանակ անտեսւում ենք խլացման այդ երեւոյթը եւ ձայնեղները, նոյնիսկ բառավերջին, գրում ենք ձայնեղ բաղաձայնով (քանզի այդպիսին է հայերէնի աւանդոյթը եւ ստուգաբանութիւնը յարգելու կամքը): Օրինակներ. *Worb* վորք, *Gottlieb* Գոթլիք, *Helgoland* Հելգոլանդ, *Rothschild* Ռոթշիլդ, *Krefeld* Գրեֆելդ, *Wittmund* Վիթմունդ, *Magdeburg* Մագդըբուրգ, *Zug* Յուգ, *Amberg* Ամբերգ, *Würzburg* Վիւրցբուրգ:

Ժդ.) Գերմաներէնի [r] բաղաձայն հնչոյթը երեք արտասանութիւն ունի. մէկը՝ նման հայերէն [n/p]-ին՝ IPA [r]¹¹, միւսը՝ [ŋ]-ին՝ IPA [ʀ], իսկ երրորդը կոկորդային է՝ լեզուակի միջոցով՝ IPA [ʁ]: Բացի այդ, ձայնաւորից յետոյ գրեթէ համր արտասանութիւն ունի՝ IPA [ʁ], հայերէն մօտաւորապէս [ը]:

Հայերէն տառադարձութեան համար, սակայն, այդ տարբերութիւնները էական չեն (դրանք զանց ենք առնում): Մենք այդ հնչոյթը (ինչպէս եւ ֆրանսերէնի պարագայում) միշտ տառադարձում ենք մեր «p/n» տառերով (երկուսի միջեւ ընտրութիւնը հայերէնի ուղղագրութեան համաձայն է), ինչպիսին էլ լինի նրա արտասանութիւնը, նոյնիսկ՝ համր, այդպիսով միանալով ոչ լատինագիր այլ լեզուներին, որոնք նոյն մօտեցումն ունեն այս հարցի շուրջ: Իրօք՝ ստուգաբանօրէն այդ հնչոյթը «p/n» է եւ նոյնիսկ իրենք՝ գերմանացիները, դասական թատրոնում եւ երգերի մէջ այն ջանում են [ռ] հնչեցնել (ինչպէս հին ժամանակներում էր):

Տառադարձութեան օրինակներ. *Reichstag* Ռայխսթագ, *Ribbentrop* Ռիբնըրոփ, *Berlin* Բերլին, *Bern* Բերն (Բեռլին, Բեռն ձեւէ-

11 Սա էլ կարող է երկու տեսակի լինել, սակայն այդքան չնեմ ուզում խորանալ:

րը ռուսերէնի կոչոտ արտասանութեան անսացողութեամբ են), Erfurt Երֆուրթ, Isar Իզար, Weimar Վայմար, Horch Հորխ, Herbert Հերբերթ:

Ժե) Գերմաներէն արմատների կամ վերջաւորութիւնների վերջին վանկի անշեչտ «e» տառը հնչում է [ը]. «e, en, el, er» հընչում են համապատասխանաբար մօտաւորապէս [ը, ըն, ըլ, ը(ը)]: Այդպէս է հնչում նաեւ մի քանի նախածանցների «e» տառը՝ «ge-» [գը-], «be-» [բը-]:

Գերմաներէնը վերջին վանկի անշեչտ «ը»երը կորցնելու ճանապարհին է (մի բան որ բնականոն երեւոյթ է լեզուաբանութեան մէջ): Օրինակ՝ արական կամ չէզոք սեռի գոյականների տրական հոլովի ձեւերում հնարաւոր է ե'ւ «e»ով, ե'ւ առանց «e»ի վերջաւորութիւն. dem Bein(e), dem Tag(e), dem Erfolg(e), dem Haar(e), dem Dach(e), dem Tisch(e), dem Wald(e) («e»ով ձեւերը հնացած են): Սեռական հոլովի դէպքեր, երբ «e»ն ըստ կամեցողութեան է. des Hut(e)s, des Staat(e)s: Հրամայականի ձեւերի մէջ կորուստ. sing(e)!, ruf(e)!, mach(e)!, sieh(e)!: Այդ հնչիւնը կորչում է եւ այսօր, խօսակցական լեզուում, բայի ներկայ ժամանակի եզակի առաջին դէմքում՝ ich mach(e), ich geh(e), ich les(e): Bremen, Thüringen, Sachsen անունների մէջ վերջին վանկի [ը]ն թոյլ արտասանութիւն ունի:

Գերմաներէնն ուրեմն [ը] հնչիւնը մեծ մասամբ արտայայտում է լատիներէն «e» տառով (լատիներէն այբուբենը [ը] հընչիւնի համար տառ չունի), սակայն երբեմն ոչինչ չեն գրում, օրինակ՝ Haydn, Jodl, Jandl, Zeisl, Herzl, Seidl, Riedl, Hirschl, Pötl, von Tepl: Ազգանունը կարող է օրինակ գրուել Hirschel կամ Hirschl՝ նոյն հնչումով:

Հայերէնում գերմաներէնի այդ ձայնաւորը այսօր ընդունուած է գրել «ե/է» (արեւելահայերէն) կամ «ը» եւ «ե/է» (արեւմտահայերէն)¹²: Երկու գրութիւններն էլ, ինչ խօսք, իրենց արդարացումն ունեն, սակայն երկուսն էլ թերի են: Լիաձայնը («ե/է») գուցէ յարմար է ուղղագրութեան եւ ստուգաբանութեան տեսանկիւնից, սակայն պահանջում է, որ շեչտը հայերէնում վերջավանկ լինի՝ Bremen Բրեմե'ն: «Ը»ով արտասանութիւնը յարմար

12 Այս տառի բառակերպի [ե/է] արտասանութիւնը հնուց է գալիս: Թատրոնի բեմին այն դեռ համարւում է ցանկալի արտասանութիւն, որպէս աւելի «դասական»:

է չեչտադրութեան տեսանկիւնից (Բրե'մըն) եւ փոխատու լեզուին աւելի մօտ լինելու առումով. սակայն «ը» տառը գրելն աւելորդ է:

Իսկապէս, Haydn եւ Herzl բոլորովին հանգիստ ընդունում ենք «Հայդն» եւ «Հերցլ» տառադարձութեամբ (առանց «ը»ի): «Bremen»-ի եւ «Keitel»¹³-ի դէպքում վարանում ենք, քանզի լատինազիր պատկերը մեզ երկմտեցնում է:

Ինչպէս Ֆրանսերէնի եւ անգլերէնի կապակցութեամբ ենք հարցը քննել, բառամիջում «ը» գրելը խորթ է հայերէն անուններին: Մենք, ինչպէս անգլերէնի պարագայում, առաջարկում ենք [ը]ով արտասանութիւն եւ զուգահեռաբար՝ առանց «ը»ի գրութիւն: Սա յարգում է ե'ւ գերմաներէնի արտասանութիւնը, ե'ւ հայերէնի ուղղագրութիւնը (հայերէնն էլ ունի նման բառեր՝ դուստ[ը]ր, փոք[ը]ր, քանգ[ը]ր, աստ[ը]ղ, արկ[ը]ղ, ակ[ը]ն, այն[ը]մ):

Ինչ վերաբերում է բառավերջի համար «e»ին (բացարձակ վերջում), մենք կ'առաջարկէինք այն բոլորովին չգրել եւ չարտասանել: Հայերէն բառերի վերջին «ը»ն յօդ է, եւ չունենք ու չենք կարող ունենալ մի անուն, որ «ը»ով վերջանայ: Մենք նոյնը անում ենք Ֆրանսերէն անունների հետ (Sartre Սարտր, եւ ոչ թէ Սարտրը): Նոյն կերպ է վարում Ֆրանսերէնը. գերմանական այդպիսի անունները կարգում է առանց ձայնաւորի, օր.՝ Elbe գերմ. ['ɛlbə], Ֆրանս. [ɛlb]:

Նոյն մօտեցումն ենք առաջարկում եւ «ge-», «be-» նախածանցների համար, այն է՝ առանց ձայնաւորի գրութիւն:

Ուստի՝ տառադարձութեան օրինակներ. Bremen Բրեմն, Dresden Դրեզդն, Gmunden Գմունդն, Beethoven Բեթհովն, Gutenberg Գուքնբերգ, Merkel Մերքլ, Kassel Քասլ, Basel Բազլ, Händel Հենդլ, Henkel Հենքլ, Brendel Բրենդլ, Seipel Ջայփլ, Keitel Քայթլ, Himmler Հիմլր, Kaltenbrunner Քալքնբրունը, Oder Ոդր, Daimler Դայմլր, Lagerfeldt Լագրֆելդ, Schneider Շնայդր, Kepler Քեփլր, Wagner Վագնր, Wintersteller Վինթըրշտելր, Fischer Ֆիշր, Alzheimer Ալցհայմր, Beckenbauer Բեքնբաւր, Müller Միլլր, Schumacher Շումախր, Wasservogel Վասրֆոգլ, վերջին «e»ով՝ Porsche Փորշ, Heine Հայն, Goethe Գոթ («oe»ի համար տե'ս վերը), Neiße Նայս, Saale Ջալ, von Linde ֆոն Լինդ, Miele Միլ, von Moltke ֆոն Մոլթէ:

13 Այսօր սովետահայերէնը (ռուսերէնի նմանութեամբ) անունը գրում է «Կելտել»՝ մի անուան մէջ միանգամից մի քանի հարց արծարծելով:

Gebirge Գրիրգ, Gebiet Գրիթ, Gelände Գլենդ, Gemeinde Գմայնդ, Behälter Բեկլըք, Besatzung Բզա(թ)ցունգ. սրանք յատուկ անուններ չեն, բայց ինչպես ասել ենք յօդուածաշարքիս Ա. մասում՝ ամէն հասարակ անուն կարող է մի օր յատուկ դառնալ: Ի հակառակէն՝ Martina Gedeck կը գրենք Գեդեկ, քանզի այստեղ «e»ն իր ձայնով է հնչում:

Մենք հասկանում ենք, որ առաջ ենք քաշում մի բացառութիւն, որ կարող է զօրութիւններ ծնել: Հարցը արժանի է քննարկման:

ԺԳ) Ինչպէս արդէն նշել ենք նախորդ յօդուածներում, կիսաձայն [j]ն, համաձայն հայերէնի ուղղագրական կանոնների, տառադարձում ենք՝ բառակցքին «յ» տառով, բառամիջում՝ «ի»ով: Օրինակներ. Jaspers Յասփրս, Jandl Յանդլ, Jülich Յուլիխ (հնարաւոր է եւ Յիլիխ՝ արեւելահայերէնում միեւնոյն արտասանութեամբ), Jena Յենա (կիսատ է սովետահայկական «Ենա» տառադարձութիւնը), Sebastian Սեբաստիան, Christian Քրիստիան, Maximilian Մաքսիմիլիան, Matthias Մաթիաս, Guderian Գուդերիան (սըխալ կը լինէր գրել Գուդերեան. դա կը դառնար հայկական ազգանուն): Բառակցքի «յ»երը, եթէ պատմական-աւանդական չեն, հնչելու են [j] եւ ոչ թէ [h]:

ԺԷ) Գերմաներէնի ձայնեղ «s»երը երբեմն հարկ է լինում հայերէն գրել «ս» եւ ոչ թէ «զ»: Գրական գերմաներէնը այն մեծ մասամբ հնչեցնում է [q], սակայն կան անուններ, որ այլ լեզուների հետ առնչութիւն ունեն. Saar Սար (Ֆրանս. Sarre), Saarbrücken Սարբրիկ(ն) (Ֆրանս. Sarrebruck), Solothurn Սոլոթուրն (Ֆրանս. Soleure), Sebastian Սեբաստիան:

Պէտք է ուշադիր լինել:

ԺԸ) Գերմաներէնում ոչ յաճախ հանդիպող [չ] հնչիւնի համար սովորաբար գործածում են «tsch» տառակապակցութիւնը ([ք+չ]). Kretschmann Քրեչման, Makatsch Մաֆաչ, Fritsch Ֆրիչ: Գերմանիայի սլաոնական անուններում հանդիպում է նաեւ «tzsch» տառակապակցութիւնը, որ հնչում է [չ] եւ այդպէս էլ պէտք է տառադարձել. Delitzsch Դելիչ (սխալ է Դելիցշ ձեւը), Hantzsch Հանչ:

Nietzsche անունը հայերէն այսօր գրում ենք «Նիցշէ» (արեւելահայերէն) կամ «Նիցչէ» (արեւմտահայերէն): Իմաստասէրի անունը գերմաներէն հնչել եւ հնչում է [նի'չն]¹⁴, զրա մէջ ո'չ [g]

14 VIÉTOR, W., *Deutsches Aussprachewörterbuch* (dritte, durchgesehene Auflage, besorgt von Dr. Ernst A. Meyer), O. R. Reisland, Leipzig 1921, 279:

պէտք է արտասանել, ո՛չ՝ [ʒ]: Մեր օրերում, չիմացութեան պատճառով, երբեմն լսելի է նաեւ [gʒ] արտասանութիւն¹⁵: Համեմատի՛ր Ֆրանսերէնը՝ [միչ], անգլերէնը՝ [մի՛չը] կամ [մի՛չի], պարսկերէնը՝ نجیح [միչէ], սերբերէնը՝ Ниче [միչէ]: Եթէ ուղղելու լինէ՛ինք այս տառադարձումը, լաւագոյնը կը լինէր «նիչ» ձեւը (վերջին [ը] հնչիւնի անկումով, տե՛ս վերը, կէտ ժե.):

ԺԹ) Գերմաներէնի [ŋ] բաղաձայնը («ng» գրութեամբ) վաղուց արդէն ընդունուած է գրել «նգ» (արեւմտահայերէնը՝ բնականաբար «նկ»): Թէեւ գերմանացի լեզուաբանները տարբերում են [ŋ] եւ [ŋg] հնչումները, հայի (եւ ոչ միայն հայի) ականջը դա չի ընկալում, եւ երկուսն էլ գրում ենք «նգ»: Անշուշտ, հնչիւնաբանօրէն աւելի ճիշտ կը լինէր առաջինը գրել պարզապէս «ն», քանզի դա ռեզային [ն] է եւ իր մէջ [գ] հնչիւն չունի: Սակայն ե՛ւ հայերէնը, ե՛ւ շատ ուրիշ լեզուներ, գերմաներէնի այդ հնչիւնը աւանդաբար գրում են երկու տառով՝ «նգ/ng»: Օրինակներ. Lang Լանգ, Behring Բերինգ, Göring Գիրինգ (կամ աւելի լաւ է՝ Գորինգ), Engels Ենգ(ե)լս, Wolfgang Վոլֆգանգ, Erlangen Երլանգն:

Զուգահեռաբար՝ [ŋk] արտասանութիւնը («nk» գրութեամբ) գրում ենք «նկ»: Օրինակ. Frankfurt Ֆրանկֆուրթ, Funke Բունկ, Kun(c)kel Գունկլ, Schinkel Շինկլ, Schlink Շլինկ:

Jungk ազգանունան մէջ «g» տառը փաստօրէն աւելորդ է, ուստի գրում ենք Բունկ:

Ի) Գերմաներէնի «pf» երկհնչիւնը հայերէն գրում են կա՛մ «պփ» (ռուսերէնի ազդեցութեամբ, սովետահայերէն՝ Պփալց), կա՛մ «փփ» (Փփալց), կա՛մ պարզապէս «ֆ» (Ֆալց¹⁶): Մեր կարծիքով՝ երեքն էլ թերի են: [Pf] երկհնչիւնը ստուգաբանօրէն ծագում է պարզ [p] հնչիւնից, եւ այլ լեզուների հետ համեմատութիւնը նոյնն է տալիս: Համեմատեցէ՛ք. Pfad, հոլ(լ)անդերէն pad, անգլ. path, Pfanne, հոլանդ. pan, անգլ. pan, Pfund, լատին. (libra) pondo, Pfeife, անգլ. եւ ֆրանս. pipe, Pfennig, հոլանդ. penning, անգլ. Penny, Pflanze, ֆրանս. plante, Pforte, ֆրանս. porte, Apfel հոլանդ. Appel, անգլ. apple, Kampf լատ. campus-ից: Գերմանիայի հիւսիսային բարբառները եւս արտաբերում են պարզ [p]:

15 Հմմտ. KRECH, E.-M. - STOCK, E. - HIRSCHFELD, U. - ANDERS, L. C., *Deutsches Aussprachewörterbuch*, Walter de Gruyter, Berlin – New York 2009, 777:

16 ԹՈՐՈՍԵԱՆ, Լ., *Ընդարձակ Բառարան Գերմաներէն-Հայերէն*, Վիեննա 2018², 987, Rheinland-Pfalz քառի տակ:

Բառակցքին երկու բաղաձայնի գրութիւնը հայերէնում ստիպում է զրանց միջեւ [ը] արտասանել՝ Փ[ը]ֆալց, Պ[ը]ֆալց, որ բառի արտասանութիւնը հեռացնում մայր լեզուից:

Մենք կ'առաջարկէինք «pf»-ն տառադարձել մէկ հնչիւնով՝ «փ»։ Pfalz ֆալց (Պալատինատի գերմանական ձեւը), Pforzheim ֆորցհայմ, Pfungstadt ֆունգշթադ, Kumpfmüller Գումփմիւլլը, Stumpf Շթումփ, Schimmelpfennig Շիմփեննիգ, Pfitzner ֆիցներ, «Mein Kampf» «Մայն ֆամփ»:

իա) Մի քանի տեղանունների մէջ գերմաներէնը չի արտասանում վերջին «w» բաղաձայնը։ Pankow, Treptow, Karow: Հայերէն երկու տարբերակն էլ հնարաւոր է։ Փանֆո(վ), Թրեփո(վ), Քարո(վ)։ Սա ստուգաբանական լուծում է պահանջում։ Եթէ հաստատուի, որ անունները սլաւոնական ծագում ունեն եւ գերմաներէնում է, որ վերջին բաղաձայնը չի արտասանւում, ապա լաւագոյնը կը լինէր այն գրել:

իբ) Մի քանի վերջաւորութիւններ ունեն իրենց յատուկ տառադարձումները։ Այսպէս.

«-ig»-ը ընդունուած է գրել արեւելահայերէն «իգ», արեւմտահայերէն՝ «իկ»։ Թէեւ այն հնչում է [iç] (փափուկ [իս]՝ [իսի, [h]ի եւ [շ]ի միջեւ), բառը ածանցուելու ժամանակ վերականգնում է իր [իգ/իկ] հնչումը։ Լաւագոյնն է այն գրել «իգ» (համաձայն գերմաներէնի ուղղագրութեան¹⁷, ինչպէս եւ այժմ գրում է արեւելահայերէնը)։ Օրինակներ. Leipzig (լէհերէն Lipsk) Լայփցիգ, Schleswig Շլեզուիգ, Merzig Մերցիգ, Ludwig Լուդուիգ, Schimmelpfennig Շիմփեննիգ, von Liebig Լիբիգ։ Անշուշտ, հնարաւոր կարող ենք համարել, որ վերջաւորութիւնը հայացուի՝ «-իկ», ինչպէս ունենք օրինակ՝ Լուդուիկ (որ սակայն մեծ բան չի փոխի արտասանութեան համար)։ Բայց սա արդէն համատեղ կայացնելիք որոշում է ենթադրում:

Բառակերթի «dt»-ն լաւ է գրել պարզապէս «դ»։ Ո՛չ «դտ» ձեւն է ընդունելի, ո՛չ «դթ»։ Stadt եւ Schmidt (նաեւ Schmid) բաղադրիչներով բոլոր տեղանուններն ու անձնանունները՝ «շթադ» եւ «շմիդ»։ Իմաստ չունի գրել մի երկրորդ տառ, որ այստեղ ե՛ւ համը է, ե՛ւ աւելորդ։ Օրինակներ՝ Helmstedt Հէլմշթեդ, Norderstedt Նորդշթեդ, Waadt Վադ (Շուիցերիայի Vaud գաւառի գերմաներէն տարբերակը), Willy Brandt Բրանդ, Gerhardt Գերհարդ, Mundt

17 Շուիցերիայում այս վերջաւորութեան սովորական արտասանութիւնը [իգ] է:

Մունդ, Schmidt Շմիդ, Arendt (Arndt) Արնդ, Lagerfeldt Լագրֆելդ, Humboldt Հումբոլդ: «Schmitt»-ի համար վարանում ենք գրել «դ», գուցէ Շմիթ (որ սակայն նոյն արտասանութիւնն ունի ինչ եւ Schmidt / Schmid ձեւերը):

«Chs» տառակապակցութիւնը, երբ այն արտասանուած է [fu], այդպէս էլ տառադարձում ենք. Fuchs ֆուխ, Sachs Ջաֆս, Sachsen Սաֆսնիս, Drechsler Դրեֆսլը, Bichsel Բիֆսլ:

Ձայնաւորին նախորդող «qu-»-ն տառադարձում ենք «ֆու-» (հնչում է [fվ])։ Quedlinburg Քուլէդլինբուրգ, Quickborn Քուիֆբորն, Quandt Քուանդ, Quidde Քուիդ, Marquardt Մարֆուարդ:

Լատիներէնից եկած «tion» վերջաւորութիւնը գերմաներէնում հնչում է [gիոն]: Անգլերէն դրան առաջարկել էինք (տե՛ս յօդուածաշարքիս Դ. մասը) «շիոն» տառադարձում, ֆրանսերէն ընդունուած է «սիոն»: Այսպէս, աշխատում ենք երեք տառադարձութիւնները իրարից շատ չհեռացնել. Aktion ալցիոն (տառադարձութեան համար ենք տալիս, հնարաւորութեան դէպքում պէտք է բնականաբար թարգմանել):

Երկրամաս նշանակող «en» վերջաւորութիւնը որոշ դէպքերում դարձնում ենք «իս» (յունարէնից եկող երկրանունակերտ ածանցով, ինչպէս աւանդոյթն է). Thüringen Թիւրինգիա, Sachsen Սաֆսնիս, Lothringen Լոթարինգիա, Preußen Պրուսիա, Westfalen Վեսթֆալիա:

իդ) Գերմաներէնն ունի մի հնչիւն, որ անուանում են «կոկորդային դադար» (ձայնաւորներից առաջ է հանդիպում), միջազգային նշանագրութեամբ՝ [ʔ]: Սա նոյն հնչիւնն է, ինչ եւ արաբերէնի համգաթ (համգա, համգէ) կոչուածը (տե՛ս Մասն Ա.): Այն, ինչպէս եւ արաբերէնի պարագայում, ոչ մի կերպ չենք տառադարձում (այլ լեզուները նոյն կերպ են վարում): Beamter հնչում է [bəʔamtə(r)]՝ երկու ձայնաւորների միջեւ լսելի կոկորդային դադարով: Կը տառադարձէինք «բըամթը» («ը»-ն ստիպուած գրում ենք):

իդ) Լատինական «v» տառը գերմաներէնում կարող է ունենալ ե՛ւ [ֆ] ե՛ւ [վ] արտասանութիւն: Օտար (եւ գերմանական որոշ) բառերի մէջ այն [վ] ձայնը ունի եւ այդպէս էլ տառադարձում ենք («վ/ու»՝ ըստ հայերէնի ուղղագրութեան). van Beethoven վան Բեթ-հովն, Vulpius Վուլպիուս, Havemann Հաւ[ը]ման, Ludvig Լուդուիգ:

Vaduz անունը արտասանում է ե՛ւ [ֆ]ով, ե՛ւ [վ]ով: Աւանդաբար գրում ենք Վադուց:

«Վ»ով կը տառադարձէինք նաեւ Gustav անունը՝ Գուստաւ, քանզի, թէեւ այստեղ «v»-ն [ֆ] է հնչում, այն նախ՝ օտար ծագման է, երկրորդ՝ բառավերջին է, որ կարելի է համարել խլա-
ցած:

Իե) Ֆրանսերէնից փոխ առած բառերի մէջ հանդիպում է [ժ] հնչիւնը. Genie ժեմի, Jackett ժակետ, Plantage պլանտաժ, ինչպէս նաեւ ռնգային հնչիւններ, որոնք տառադարձում ենք «ն» տառի յաւելումով, ինչպէս անում ենք Ֆրանսերէնի պարագայում (գերմանացիները այն նոյնպէս կիսառնգային են արտասանում). Pension պանսիոն:

Իզ) Օտար բառերում պատահում է նաեւ «dsch» քառագիրը, որ արտայայտում է հայերէն [ջ] հնչիւնը. Dschungel ջունգլ:

Իէ) Գերմաներէնի, ինչպէս եւ որեւէ այլ օտար լեզուի կրկնակ բաղաձայնները հայերէն գերադասելի է արտայայտել մէկ բաղաձայնով, մանաւանդ որ գերմաներէնում էլ դրանք աւելի յաճախ մէկ ձայնով են հնչում. Zollikon Յոլիֆոն, Müller Միւլլըր, Schiller Շիլլըր, Grimm Գրիմ, Immendorff Իմմդորֆ, Mommsen Մոմզեն, Innsbruck Ինսբրուք, Mann Ման (եւ նոյն բաղադրիչով անունները), Knorr Քնոր, Kerr Քեր, Schnurre Շնուր:

Իը) Գերմաներէնում հանդիպում են հին յունարէն, լատիներէն, ֆրանսերէն առանձին բառեր ու արտայայտութիւններ: Դրանց տառադարձութիւնը բնականաբար պէտք է մօտեցնել մայր լեզուի հնչիւնաբանութեանը եւ հայերէն աւանդական ձեւերին: Հայերէն ենք գրում (եւ ոչ թէ տառադարձում) անպայմանօրէն դիցաբանական կամ աստուածաշնչեան անունները. Հերակլէս, Ապոլոն/Ապոլոն, Նոյ, Մովսէս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս եւ այլն:

Իթ) Գերմաներէնի ուղղագրութիւնը պահանջում է իրար կցել ածանցեալ բազմաթիւ բարդութիւններ (Gesundheits|werbung, Zeitungs|industrie, Wasch|maschine, Produktions|anleitung, Fallschirm|springer|schule), մի բան, որ յաճախ ծնում է խիստ երկարաչուն և բառեր (գերմանացիները դրանք կոչում են Mammut|wörter մամուլթ բառեր)՝ Zwei|hundert|vier|und|achtzig|tausend (284 000) երկու հարիւր ութսուն չորս հազար¹⁸: Թէեւ գերմաներէնի՝ 1996 թուականի

18 Ի դէպ՝ զարմանալի է թէ մինչդեռ բոլոր թուականները հայերէն առանձին-առանձին են գրում, ինչու՞ են միաւորները կցում տասնեակներին. երկու հարիւր հինգ, հազար վեց հարիւր, բայց՝ ֆաներկու, երեսուներեք, ֆառասունչորս

ուղղագրական փոփոխությունները թեթեակի շտկեցին այդ թերութիւնը, փոփոխություններն այնքան երկչոտ էին, որ ողջ համակարգը մնաց գրեթէ նոյնը¹⁹:

Տառադարձութիւն կատարելու դէպքերում մենք խորհուրդ կը տայինք այդպիսի բարդութիւններն առանձին բառերով գրել: Դա կը լինի շատ աւելի յստակ ու դիւրընթեռնելի. Kultur|kampf «Կուլտուր ֆամփ» (քան թէ մի բառով՝ «Կուլտուրֆամփ»):

Այդպիսի բառերը, սակայն, մեծ մասամբ թարգմանելի արտայայտություններ են (Haus|tür|schlüssel|loch տան դռան բանալու անցք), եւ տառադարձութեան հարցը հազուադէպ է առաջ գալիս:

Ղ) Լատինական տառերի անուանումները գերմաներէնում նոյնպէս ունեն իրենց յատուկ արտասանություններ: Սակայն հայ հասարակությունը պէտք է գիտակցի, որ լատինագիր ամէն մի լեզու չի կարող պահանջել, որ իր յապաւումները ի՞ր ձեւով արտասանենք եւ տառադարձենք: Մենք միանշանակ կողմ ենք լատինական տառերի միասնական հնչմանը, այնպէս ինչպէս նկարագրել ենք մեր յօդուածաշարքի Բ. մասում (հին յունարէն եւ լատիներէն). A ա, B քէ, C կէ, D դէ եւ այլն, օրինակ՝ վիտամին C՝ [կէ], ոչ թէ [ցէ]:

Պ) Գերմաներէնը բոլոր գոյական անունները գլխադրերով (մեծատառ) է դնում: Տառադարձելիս բնականաբար պէտք է դրանք փոխարինել հայերէնի պահանջած գրով. Genfer See Լեմանի (Ժնևի) լիճ:

ՊԲ) Ինչպէս եւ ամէն օտար լեզուի պարագայում, հնարաւոր եւ նախընտրելի ենք համարում աշխարհագրական անունների որոշ մասնիկների թարգմանություններ. Neu Wulmstorf Նոր Վուլմսթորֆ, եւ ոչ թէ Նոյ Վուլմսթորֆ, քանզի թաղամասը նախկին Վուլմսթորֆ աւանի տեղում է: Նմանապէս՝ Niedersachsen Սառփն Սաֆունիա (որ արդէն աւանդական է): Mecklenburg-Vorpommern կրկնակի անուան մէջ առաջին մասը տառադարձում ենք՝ Մեֆլմբուրգ, իսկ երկրորդը թարգմանում՝ կա՛մ Այսթպոմերանիա, Առաջնային Պոմերանիա (գերմաներէնի օրինակով), կա՛մ Արեւմտեան Պոմերանիա (ֆրանսերէնի ու անգլերէնի օրինակով):

ՊԳ) Գետերի անուններն տեղակայուած քաղաքները, ինչպէս աւանդոյթ է, հայերէն քերականութեամբ ենք մատուցում (գետի

19 Տեղանունների ու անձնանունների գրութիւնը մնաց նոյնը: Աւելին՝ 2006 թուականին շատ փոփոխութիւններ վերանայուեցին:

անուան սեռական հոլովով)։ Frankfurt am Main Մայնի Ֆրանկֆուրթ, Brandenburg an der Havel Հաֆլի Բրանդենբուրգ։

ԼԷ) Եւ վերջապէս, խիստ կարեւոր է, որ հայերէն տառերով գրած անունը վերջավանկ չեղտ ունենայ։ Ինչպէս արդէն դրա մասին խօսել ենք անգլերէնի պարագայում, հայերէն տառադարձած օտար բոլոր անունները հայերէն բառերի նման պէտք է արտասանել, այն է՝ վերջաչէտ։ Օրինակներ։ Ռոբշի'լդ (ոչ թէ Ռո'քշիլդ), Այնշթա'յն (ոչ թէ Ա'յնշթայն), Գուդերիա'ն (ոչ թէ Գուդե'րիան), Ռոգա Լուֆսմըն'ուրգ (ոչ թէ Ռոգա Լո'ւֆսմընուրգ), Բիսմա'րֆ (ոչ թէ Բի'սմարֆ), Ալցհայմ'ըր (ոչ թէ Ա'լցհայմըր), Գուքմը'րգ (ոչ թէ Գո'ւքմըրգ), ֆոն Քարայա'ն (ոչ թէ ֆոն Քա'րայան) եւ այլն։

ԱՄՓՈՓՈՒՄ

Մեր նախորդ յօդուածների ամփոփիչ մտքերի մեծ մասը հաւասարապէս վերաբերում է եւ գերմաներէնին (եւ այստեղ դըրանք չենք կրկնում)։

Գերմաներէնից կատարած տառադարձութեան քննութիւնը միեւնոյն ժամանակ ցոյց է տալիս, որ չկայ այսպէս կոչուած «դիւրատառադարձ» լեզու, ինչպէս կարող էր թուալ գերմաներէնի պարագայում, որն ունի կանոնաւոր ուղղագրութիւն եւ հրէնչիւնների ու տառերի բաւական սերտ յարաբերութիւն։ Ամէն լեզու ունի իր նրբութիւնները, եւ ամէն լեզուի համար պէտք է հաշուի առնել դրա հնչիւնաբանութեան բոլոր բարդութիւնները։ Երբեմն այնպիսի կէտերն են դժուարութիւն ներկայացնում, որոնց մասին անփորձ թարգմանիչը չի էլ մտածում։

Գերմաներէնից գրագէտ եւ միացեալ տառադարձութիւն մշակելու գործում, ինչպէս արդէն նշել ենք Ֆրանսերէնին ու անգլերէնին նուիրած յօդուածներում, հայերէնը պէտք է հրաժարուի ինչպէս կիլիկեան (որ գերիշխում է արեւմտահայերէնում), այնպէս էլ սովետական (գերիշխում է արեւելահայերէնում) տառադարձումներից։

Կը ցանկանայինք եւս մէկ անգամ պնդել այն միտքը, որ տառադարձութիւնը մի մարդու գործ չէ, եւ որ ազգովին ընդունելի տառադարձութիւն մշակելու համար պետական ու գիտական հաստատութիւնները իրենց մասնակցութիւնը պէտք է ունենան։ Առանց հեղինակաւոր կառույցների՝ բոլոր առաջարկութիւնները յօդս են ցնդելու, եւ տարբեր հեղինակներ շարունա-

*կելու են կիրարկել տառադարձութիւններ, որ իրենց են ճիշտ
թուալու: Մի բան, որ նպաստելու է լեզուի հեղինակութեան
անկմանը, նրա նկատմամբ անտարբերութեանը եւ վերջին հա-
շուով՝ ազգի պառակտմանը:*

ԱՐՄԷՆ ՄԻՓԱԷԼԵԱՆ

Résumé**LES PRINCIPES DE LA TRANSLITTÉRATION
(TRANSCRIPTION) ARMÉNIENNE DES NOMS PROPRES
ÉTRANGERS****V partie – la langue allemande****ARMEN MICHAELIAN**

Le présent article fait partie d'une série qui traite de la translittération (transcription) des noms propres étrangers en arménien (de la façon de transcrire les noms étrangers en caractères arméniens). Les références des quatre premières parties déjà parues sont : *The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part I – Middle Eastern Languages* [en arménien], in «*Haigazian Armenological Review*», 40 (2020), pp. 341-364 ; *Les Principes de la translittération arménienne des noms propres étrangers, II partie – langues classiques (grec ancien et latin)* [en arménien], «*Bazmavep*», 178 (2020), N° 1-2, pp. 304-336 ; *The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part III – French Language* [en arménien], «*Haigazian Armenological Review*», 41 (2021), pp. 443-466 ; *Les Principes de la translittération arménienne des noms propres étrangers, IV partie – la langue anglaise* [en arménien], «*Handes Amsorya*», 135 (2021), pp. 197-246.

La cinquième, présente partie de la série est consacrée à la translittération (transcription) des noms propres de la langue allemande. Le principe de la translittération est basé (comme dans toute la série) sur l'orthographe classique de l'arménien en écartant rigoureusement la translittération « cilicienne » d'un côté et la « soviétique » de l'autre. La translittération des noms propres de la langue allemande (pareil à beaucoup d'autres langues) n'est pas stabilisée en arménien, due d'un côté à l'influence de la prononciation occidentale des dialectes arméniens, de l'autre côté à l'influence de la langue russe sur l'arménien oriental.

Après un rappel des principes phonologiques et orthographiques de la translittération arménienne évoqués dans les premiers articles de la série, l'auteur passe au crible les sons et les phonèmes allemands les plus problématiques

et propose (en s'appuyant sur de nombreux exemples) une translittération de principe pour chacun d'entre eux.

La série d'articles va continuer avec d'autres langues importantes pour le monde arménien, comme l'italien, l'espagnol, le russe, le hindi, le chinois, le japonais etc.